

ՀԱՍԾԷ
M. ARCHAM
Pos'e Restante
ATHENES (Grèce)

Փոսթին ծախքը խմբա-
գրութեան կը պատկանի:

ՄԻՈՒԹԻՒՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Ազգի մը ապագայ
կեանքի բարւոքման
առաջին պայմանն է
Միութիւնը:

«Միութիւն»-ը ա-
մեն տեղ ձրի կը դըր-
ուի:

ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ

1897

ԱԹԵՔ

ԹԻԻ 11

ԶԻԶՈՒՄ ԵՒ ԶՈՆՈՂՈՒԹԻՒՆ

Եթէ ընդհ. ազգութեանց անցեա-
լին վրայ հետազօտ հայեացք մը ար-
ձակենք, եթէ պատմութեանց էջերը
աչքէ անցնենք, պիտի տեսնենք կարգ-
մը ազգերու փձացումը: Աստուծոյ մի-
քանիները թէ և կորուսած իրենց իշ-
խանութիւնը, բայց ցայս վայր օտար
հպատակութեան տակ կանգուն պա-
հած են իրենց կրօնքն ու ազգու-
թիւնը, որոնց մէկն ալ մենք հայերս
ենք: Իւրաքանչիւր ազգ իր կորստեան
բանաւոր պատճառն ունեցած է, ու-
մանք ներքին պաշտօնակազմերով, ու-
մանք շահախնդրութիւնէ թելադրուած
մատնութեամբ, ոմանք եսամոլութե-
ամբ, փառասիրութեամբ և հպար-
տութեամբ. իսկ ոմանք ալ օտարի
նենգամիտ ու խաբուսիկ խորհուրդ-
ներէ և դաւերէ յափշտակուելով կո-
րստեան մատնած են իրենց ազգերը:
Այսպէս ամենքն ալ առ հասարակ
իրենց թերութիւնները ունեցած են:

Մեր մէջ կը գտնուին տակաւին
այնպիսի պարզամիտներ, որոնք այս
օրինակ թերութեանց անյաջողութիւն
տիտղոսը տալով կը վերագրեն բաղ-
դին ու ճակատագրին: Ընդհանրապէս
մենք այնպէս կը հաւատանք թէ որ
և է ժողովրդի մը կամ ազգութեան
մը թշուառութիւնը ու բարեկեցու-
թիւնը, յառաջդիմութիւնն ու յե-
տադիմութիւնը կախում ունի մի մի-
այն նոյն ազգի ղեկը վարողներէն,
որոնց ամբիւն մէջ է միշտ ժողովրդի
կեանքն ու մահը, որովհետեւ նա ինչ
հետեւող մըն է: Իբր օրինակ ներկա-
յայտենք Յունաստանը, որուն ժո-

ղովուրդը լոկ հետեւող մըն է, վստա-
հելով թէ կառավարութիւնը պէտք
եղած միջոցները խորհած և ռազմա-
գիտական պատրաստութիւնները տե-
սած ըլլալով կը պատերազմի, անգի-
տակցարար հետեւեցաւ և հայրենա-
նասիրական անկեղծ եռանդով առ-
իւծի պէս կռուեցաւ, բայց ինչ օ-
գուտ, ի շնորհս իր ղեկավարներու
գիւտնադիտական սխալ քայլերուն և
աններելի թերութեանց նորանոր
թշուառութեան մատնուեցաւ:

Ահա երկրորդ օրինակ մըն ալ կը
ներկայացնենք մեր ազգը, որ տաքի-
ներէ ի վեր բարբարոս վայրենի ցեղ
մը սիրաշահելով ամեն զիջում և զո-
հողութիւն չէր խնայած, միայն իր
կրօնն ու ազգութիւնը պահպանելու
համար «չանը հետ չեղբայր» եղած էր:

Երբ դարուս վերջերը մարդակեր
Սուլթանը քրիստոնէայ տարրը ընա-
լինջ ընելու ծրագրով դաշը բարձրա-
ցաւ, իսկ ռուս-թրքական պատերազմէն
վերջոյ առաջին գործն էղաւ հայե-
րուն գլխին կրակ տեղացնել, այն-
պէս որ հնչումներն ու բաղամղիմի
հալածանքները անտանելի դարձան:
Հայը վերջապէս ուղեց մոռնալ ըմ-
տրկութիւնը, համբերութիւնը և խո-
նարհ հաւատարմութիւնը, սթափե-
ցաւ: Ինչպէս ծաղաւի մարդը ջուրին
կը վաղէ: Նմանապէս Հայն ալ յի-
ղափոխութեան դիմեց նուիրելով իր
կեանքն ու ստացուածքը, զոհելով իր
կեանքն ու պատիւը, մէկ կողմ թո-
ղելով անձնական հաշիւ ատելութիւն
և իբր հարազատ եղբայր ձեռք ձեռքի
տնւաւ մահ կամ ազատութիւն գո-
չելով նենգութեամբ յեղափոխական փր-
շոտ ճանապարհին մէջ:

Հիմա կ'ուզենք ի ներքոյ հակիրճ
կերպով բացատրել թէ մեր ժողո-
վուրդին ցոյց տուած անակնկալելի
համբարխութեան ամեն պարագա-
ներու տակ զիջման և զոհողութեան
ու անսահման հայրենասիրութեան
փոխարէն մեր ղեկավարները ինչ
օգտակարութիւն ցոյց տուին:

Ազատութեան նայն տեսչը, որ
հազիւ սկսած էր մուտ գտնել
հայ սրտերու մէջ, կարծես զուգահի-
պութիւն մըն էր որ կը տեսնէինք
ազգային հրապարակին վրայ մեր ան-
ծանօթ ու ինքնակոչ ղեկավարները,
որոնք մէկիկ մէկիկ գուրս կուգային
տարբեր գոյներով ու զանազան ծրա-
գիրներով: Աստուծոյ անաշխտ եղաւ
Տ. Մ. Փորթուգալեան որ «Արմէ-
նիա»-ի հրատարակութեամբ «Հայ մե-
ծամասնութեան համադրանքը շահե-
ցաւ իր խոստումներով»: Նպատակը
ըստ մեզ լոկ հայրենասիրական ընդ-
լով ձեռնարկի եւ բարի էր, սակայն ազգ
մը խառնադրի ճիրաններէն փրկելով
համար մեծ ոյժի կը կարօտէր այն
ալ աջակցութեամբ միայն կ'ըլլար թէ
անձնատրութեան մը անջատ
ճիգերով:

Տէր և Տկն. Նազարէկեանք և
Տ. Նշտնակառպետեան ժընէփի հա-
մարտականական ուսանողներ ըլլալով,
իրենց պրած օգտակար յօդուածները
շարունակաբար կը հրատարակէին
«Արմէնիա»-ի սխանակներէն մէկը այս
արեւմտահայ սերտ յաջարկու-
թիւնը: Համանակ մը Բրեւեց յետոյ
Ժընէփիները տեսնելով հայ ժողո-
վրդի ճիգերունը դէպք յեղափոխու-
թեան գաղափարը, կոնսակցութիւն
կազմելու գաղափարը յղացան և
առաջարկեցին Տ. Փորթուգալեանի
թերթը ընդարձակել և յեղափոխու-
թեան գաղափարով ճախացնել պայմա-
նով:

գարծնել օւկան նորակազմելի յեղ-
կուսակցութեան, պայմանով որ Տ.
Փորթուգալեան ամսական որոշ գու-
մար մը ստանայ և միշտ մնայ թեր-
թին խմբագրապետ ու կուսակցու-
թեան անդամ: Տ. Փորթուգալեան
գեղարդաբար մերժեց իրեն առա-
ջարկուած պայմանները և զլացաւ
ԶԻՋՈՒՄՆ ու ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ:

Ժընէվցիները գտնուելով «Հըն-
չակ»ի հրատարակութեամբ առաջ
բերին համանուն կուսակցութիւնը:
Այս միջադէպը Տ. Նազարբէկ ինք
բերանացի նկարագրած է մեզ, որուն
ստորագրութեան չենք կասկածիր:

* * *

Հնչ. կուսակցութեան հիմնադիր
Ժընէվցի Լուսաւորները իրենց ծրա-
գրին մէջ ոսցիալիզմ բառը մտցնելով,
զաղափարի ընդարձակ մշակում և
կազմակերպութեան վարչական դրու-
թիւն ցոյց կուտային և այսպէս յա-
ջողած էին խաբել իրենց համակիր-
ները նոյն իսկ տան մէջ աշխատող
գրաւար ևն. ընկերները, մինչդեռ
դրութիւնը քրտնալեզուական էր
և խաղաղբէկի բարձր հրամանն էր որ
ուրիշ հայրենապէս և անմեղ հայուն
կեանքը կը զաւարտէ և շահախնդիր
պնդան հեռուողին փառք ոչ պա-
տիւ կուտար:

Սնդիրը չերկարենք, վերջապէս
Հնչ. կուսակցութիւնը դորացաւ և
քիչ ժամանակի մէջ Տ. Փորթուգալ-
եանի վրայ չաղթանակեց տարաւ և
անդր կազմած «Հայոց Հայրենակա-
րութեան Միութիւն»ը տապալեց, ժող-
ովորդին ղեկը անեց բերաւ 7 ալ մեծ
կրնար անոր հետ խօսիլ բանի որ
Գուստ-Գարեթի ցոյցն ալ կազմակեր-
պեց իր շահատակութեանց անդէտ
քանի մը գործիչներու ձեռքով:

Բանի մը նշանաւոր Հնչակեան-
ներ կուհեւելով Նազարբէկի վիճակի-
քանակն դրութիւնը առաջարկեցին
կեդրոնի մէջ քանի մը անդամներ
պէտքնելով բարեփոխութիւններ մտ-
ցնել և կուսակցութիւնը վերածել
վարչական դրութեան, բայց Պ. Նա-
զարբէկ մերժեց նուաճեց ԶԻՋՈՒՄ
և ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ընելու, բացորոշա-
պէս պատասխանեց. «Մենք սեղանը
պատրաստեցինք դժուար կռիւէն օգ-
տուելու, անպարկէշ բաց է եթէ Վրնաք
գութ ար գործեցէք»: Այս անհամա-
ձայնութիւնն «Դրօպի» թերթով ծա-
ղում առաւ Դաշնակցութիւնը:

(Շար. տեղիւ Թաւրոզաւորի ծրա-
թիւն առաջին էջին մէջ):

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԽԱՋԱԳՈՂ ԱՌԱՔԵԱԼ ՄԸ

Շիշթով, ապրիլ 10

Ներկայ կացութիւնը և ազգա-
յին տագնապալի վիճակը կ'ըստիպէ
մեզ միշտ արթուն մնալ և ըզ-
գուշանալ «խաչագող-առաքեալ»ներէ
և «գառնազգեստ-գայլ»երէ, որոնք
դեռ անխղճաբար կը շարունակեն ի-
րենց շահատակութիւնները, կը կե-
ղեքեն ժողովուրդը ամեն անգնիւ
միջոցներով և արիւնի ճահիճէն կ'ու-
զեն իրենց կողոպուտը պատրաստել:

Մարտ 22ին տեղս հառաւ Լեւոն
Գոջունեանց (Սրա-Շանթ) անուն
անձը, որ պաշտօն ունի եղբւր այցե-
լի պուրկարպեակ հայերուն, ար-
դարացնել և անմեղ հոգակել Հնչակ-
եան նախկին կեդրոնի անդամք Նա-
զարբէկեակները:

Այցելու առաքեալը, եկած օրը
հրաւիրապէս ցրուելով միութեան
վրայ խօսելու համար ժողովուրդը
ժողովի հրաւիրեց: Ժողովուրդը մի-
ութեան ձայնը լսածին պէս միու-
թաց խուռն բազմութեամբ ներկայ
գտնուիլ այս ցանկալի հրաւերին:

Առաջին ժողովը մի քիչ գոհա-
ցուցիչ էր, ժողովուրդը խաղաղ սըր-
տով ցրուեցաւ և ոչ ոք հասկցաւ այս
անձին ով ըլլալը: Երկրորդ ժողովին
մէջ, առաքեալը սկսաւ միութեան
կոչել ներկաները առ Նազարբէկեան
կուսակցութիւն, նա սաստիկ զայ-
րոյթով հարուածեց ամեն անոնց որ
Նազարբէկեան չեն, դրուատեց և
ջատագովեց միայն Նազարբէկեանը,
գտնուեցան քանի մը միամիտներ ևս
որ անգամ մըն ալ խաբուելով իրենց
արիւն քրտնեղով վաստկուած ֆը-
րանքները անոր ամիսն մէջ պարպե-
ցին: Երկրորդ ժողովին մէջ որոշա-
պէս հասկցուեցաւ առաքեալին որու
վարձկան ըլլալը, նա վնասուեցաւ
զգուշանքով ու արհամարհանքով և
հոս գտած ընդունելութիւնը իրեն
բաժանորդութիւն չպիտի ներշնչէ ու-
րիշ այցելութիւններ ընելու:

Վարձկան Նազարբէկեանը ամեն
տեւակ միջոցներու կը դիմեն հայ
ժողովուրդը հեռու պահելու համար
միութեան գաղափարէն, իրենց նը-
պասակն է զաղափել և անուղղակի
միջոցներով ազգը կողոպտել:

Հայ ժողովուրդիս մէջ արմատա-
ցած միակ գաղափարն է ի մի ձուլել
բոլոր յեղափոխական մարմինները և
այնպէս յառաջ տանիլ Ազատութեան
Սուրբ Գործը: Արտաքին թշնամիէն
շատ աւելի հալածել ու հարուածել
պէտք է մեր ներքին բախտախնդիր
թշնամիները և զգուշանալ խաչագող
առաքեալներէ, որոնք արժանի են
միայն թուրի և անէծքի: Զի խնա-
յեք մեր նիւթական և բարոյական
աջակցութիւնը միութեան սիրող մի-
ութիւնով ու անշահախնդրութեամբ
աշխատող յեղափոխականին, քանզի
այս միջոցով միայն կարելի է հասնիլ
ԱԶԱՏՈՒԹԵԱՆ:

Գ. Գ.

* * *

ՓՐՈՎԻՏՅԱՆՍ, մարտ 14

Շարժումն սկսած է, միութեան
խնդիրը հակադրալ ծաւալիլ սկսած
է Հայ երիտասարդութեան մէջ, ա-
մէն անոնք որ մինչև այսօր կուսակ-
ցական ոգով միայն ներշնչուած սոսկ
կուսակցութեան մը կը ներկայանային Հայ
ազգին: Բայց այժմ անցեալ դառն
իրականութիւնը մերկապարանոց երբ
դուրս եկաւ, որուն մէջ գլորած էին
առանց որոշ գիտակցութեան մը
առանց որոշ համոզման մը, առանց
խորապնդին քննութեան, որուն ար-
դիւնքը ուրիշ բան չեղաւ բայց եթէ
ոչնչէն աւելի բան մը մնասակարը:

Նոր-աշխարհի ասպարէզին վրայ
Հայ Յեղ. պարագլխուն ամեն կարգի
ազգակոծան գործունէութեան ժո-
ղովուրդը բացորոշապէս տեսած ու
բողոքած էր միշտ, բայց կարգ մը
եքեւակապութեամբ վառվռուն ան-
փորձ պտանին իրական կեանքին
անտեղեակ, հմայուած վերադառն
գաղափարներով, անգիտակցաբար
նետուած էին «նրա» ընկերվարական
գիրիւ: Բայց ներկայ սթավումը հի-
անալի ու վսեմ է անդույր Հնչակ-
եան Յեղ. կուսակցութեան մասնա-
ճիւղին մէջ: Միութեան, որ կը թըր-
թուայ ամեն մի անոնախօսէ, ամեն
մի Հայ սրտէ:

Հոս խաբք գործի փոխուած է և
կրնամ ըսել որ ամենկեան Հայ գա-
ղութիւնը շարժման մէջ է դէպ ի Միու-
թիւնը գեպի յառաջդիմութիւն յե-
ղափոխական պայքարէջին մէջ: Այս
գովելի գաղափարը միայն պիտի կըր-
նայ Հայկակալի Յեղափոխութիւնը
հաստատ հիմքը վրայ դնել և ազգը

իր բաղձացած նպատակին հասցնել։
Ի սրտէ փափագող և ջերմ հա-
մակիր միութեան, միայն Հայրենիքի
համար զոհաբերուողներ, այս սուրբ
նպատակին պիտի հասնինք չուտով
երբ մէկ «Հայրենիք», մէկ նպատակ,
մէկ բանակ» ունինք։

ՏՐԴԱՏ-ՎԱՀԷ

* * *

ՎԱՌՆԱ, 9 ապրիլ

Հնչակեան կուսակցութեան կա-
րեւոր անդամներէն մի քանին՝ երբ
կազմուեցան ինքնապաշտպանութեան
հաստատելով և գուհակելով սպառ-
նացող փառանքները ուղեցին զրօն
երգումին և փոխել ապակեղոնաց-
ման ու ջանացին համէկեւ նազար-
բէկը և իր արքանեակները, սակայն
իրենց ջանքերը ապարդիւն մնալով,
ոտիպուեցան զատուիլ Հնչակեան
ծրագրէն ու կազմել նոր կուսակ-
ցութիւն մը։

Ամեն անոնք որ լոկ ազգին վեր-
կութեանը համար յեղափոխական
են, չեն կրնար ուրանալ ապակեղո-
նացման ծրագրի մը օգտակարու-
թիւնը։ Սակայն այն ատեն երբ ա-
մենք կ'ընդունէին Հնչակեան ծրա-
գիրը, ո՞ր էին այն միտքերը որ հա-
մալսարանականներ էին ու միապե-
տութեան հակառակ կը խօսէին, կամ
գոնէ ինչո՞ւ չխորհեցան ծրագրի ան-
այլալէի կամ փոփոխելի մասերուն
վրայ, և երդմամբ ընդունելով զայն,
ասպարէզին առջև պատ քաշեցին։

Խելացի փորձառուները ուղեցին
քակել պատը ու ազատ առաքելով
և օգտակար ծրագրով գործել, վեր-
ջապէս համաձայնութիւն մը չգոյա-
նալով երկրորդ կուսակցութիւնը կազ-
մուեցաւ, սակայն շատ դժուար եղաւ
ժողովուրդը համոզել թէ ապակեղ-
ոնացումը օգտակար է, ինչու որ
յեղափոխութեան առաջին սերմը
Հնչակեան ծրագրով ցանուեցաւ և
մեծ մասամբ յարած էին Հնչակեա-
նութեան։ Այս միջոցին զատուի-
լը պատճառ եղաւ ժողովրդին
մէջ երկպառակութիւն ձգելու և եր-
կու կողմէն ալ ուժերու մէկ մասը
սկսան գործածել կուսակցութեանց
պաշտպանութեան որ մինչև ցարդ կը
չարունակուի դժբաղդաբար։ Թէև
Հնչակեանց մեծագոյն և լուրջ մասը
վերջերս տեսան իրենց չարաչար կեր-

պով խաբուելը, ածապարեցին գոր-
ծին լաւ ուղղութիւն մը տալ, սա-
կայն միեւնոյն ժամանակ ամենքէն ալ
կասկածուիլ սկսուեցաւ, որովհետեւ
խաբուողը միշտ կասկածոտ կ'ըլլայ։
Երբ ու է կուսակցութեան պատկա-
նող գործիչ մը կը մտնէ ժողովրդին
մէջ փոխանակ իր գերը խղճմտորէն
կատարելու բոլորովին պատճառ կը
դառնայ անմիաբանութեան ու երկ-
պառակութեան, նա միշտ պոռոտա-
խօս, զրպարտող և կծու քննադատ
մը կը հանդիսանայ միուս կուսակ-
ցութիւնը, կ'անուանարկէ, մատնիչ
չահամու և այլն անուններով կը
մկրտէ զանոնք, այսպէս ժողովրդին
ակնիջը աղտեղութիւնով լեցուելէն
յետոյ և ոչ մէկ կուսակցութիւնը
յարգ կ'ունենայ, չուարունմ ու գայ-
թակցութիւնը յեղափոխութիւնը կը
վիժեցնեն...

Կուսակցական անունի սիրով,
տեսնողս գործունէութեամբ, դիրար
ջախջախելու և անուն բարձրացնելու
համար փաստեր ստեղծել, ինչպէս
փաստաբանները դատարանի առջև։
Ձարմանք այդպիսի յեղափոխականին
և ափոսս իր կրած վեհ մակդիրին,
երբ նա անունի սին փառքին ետե-
ւէն կը վազէ։ Երեւի թէ իրենց
պատճառով առաջ եկած վնասները
տեսնելով կը փութան փոխել ըն-
թացքին, երանի՜ թէ այսպէս ըլլար
քանի ժամանակը փոխուած ու շա-
աւելի տարբեր իրական պատկերը
պարզուած է։

Պէտք է ձգել անունի փառքը,
եթէ կ'ընտրի նազարբէկը միապետ և
փառասէր է, պէտք է ալ ըսենք որ
ուրիշներն ալ եսամոլներ են, բանդի
եթէ խելացիներու խումբ մը օգտա-
կար միջոցներով կը գործէ, պէտք է
եսականութիւնով ու կուսակցային
անունով պարծենայ։ Հայ ժողովրդի
փափաքն ու կամքն է միութիւն և
համերաշխ գործունէութիւն, պէտք
է համաձայնիլ, միութիւն կազմել,
Ազգին ս.րոյն, Ազատութեան սիրոյն
համար։ Միութիւն ըսելով լոկ ա-
նունի միութիւն չհասկնանք, ծրա-
գրի և գործելու միութիւնը անհրա-
ժեշտ է։

Կուսակցութիւնը օգտակար կըր-
նան ըլլալ եթէ ամենքը մի ծրագրով
գործեն ու մէկի թողուն հակառա-
կութիւններն և զիբար հալածելը,
դադարաւորեալ տարածեն ժողովուրդը

հրաւիրելու օգնութիւն յեղափոխու-
թեան, ո՞ր կուսակցութեան որ կ'ու-
զէ թող պատկանի, որու որ կ'ուզէ
անոր թող պատկանի, այսպէսով ա-
մեն հայ ինքնին պիտի նետուի յե-
ղափոխութեան ասպարէզը, այլևս
հարուստը չպիտի կրնայ պատճառ-
ներ ցայց տալ դրամ չտալու համար,
ամենքն ալ փութկոտութեամբ պիտի
աշխատին օգտակար ըլլալու, յայն-
ժամ կը յայտնուի թէ ով է ճշմարիտ
Հայրենասէրը և չուտով կը հասնինք
մեր նպատակին։

Դաշնակցականները կը բարոյն
թէ՝ իրենք ալ փափագող են միու-
թեան և կ'ըսեն։ «Դարուս մէջ եր-
կու ծրագիր կայ մին՝ կեդրոնացում,
միւսը ապակեղոնացում, մեր ծրա-
գիրն է միայն օգտակարը», սակայն
չմոռնանք որ նախ իրենք ալ նազար-
բէկի ընկերներն են էին, հետեւա-
բար սխալմանց ալ մեղսակից կը հա-
մարուին։ Անցեալը անցաւ ներկային
և ապագային վրայ խորհինք, փոխա-
նակ ըսելու. եկէք մեր ծրագիրը ըն-
դունեցէք որ միանանք, այս ան-
գուտ խօսքերը մէկդի թողուն հրա-
ւէր կարգան կուսակցութեանց որ
ժողով մը գումարուի ու ամենուն
ներկայութեամբ պատրաստուի այն-
պիսի ծրագրի մը, որը համապա-
տասխանէ մեր յեղափոխութեան։ Ի-
րար վիճաւորած արժանապատու-
թիւնը կրկին չվիրաւորելու համար,
ծրագրին պնդանք պէտք է կարեւ-
որութիւն տալ, այլ անոր յօդուած-
ներուն ու գործադրութեան եղա-
նակին վրայ ԼԱԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ հարկ
է քննել։

ՓԱՓԱՔՈՂ ՄԸ

* * *

ՓՐՎԻՏԷՆԱ, (Ամերիկա) 2 Ապրիլ

«Միութիւնը» ազգի մը փրկու-
թեան հիմնաքարն է»։

Հայկական դատին համար ժա-
մանակէ Քրի վեր կը գործեն երկուս
մարմիններ։ Դաշնակցականը և Հրն-
չակեանք։ Այս երկու կուսակցու-
թիւններու մէջ պարբերաբար բողոք-
ներ կը բարձրանան միութեամբ գոր-
ծելու, մանաւանդ նոր-Հնչակեանց
կամ Ալֆարականաց մէջ։ Բայց այդ
բողոքները լոկ խօսելով միայն կ'անց-
նին, սակայն խօսելու և վիճելու
ժամանակը այլևս անցաւ. միու-
թեամբ կամ համեմատութեամբ գոր-

ծելու անմիջական պէտքը կայ, ինչու որ մեր թշուառ Հայրենիքը մահամերձ ձայնով մեզմէ օգնութիւն կ'աղաղակէ դիմադրելու համար «հարեմի լակոտ»ին ի գործ դրած անգթութիւններուն և վայրենի խժոժութիւններուն: Եւրոպիոյ անխիղճ տիպումաթիւն մի միայն սոսկալի անտարբեթութեամբ դիտեց բարբարոս գազան տաճկին ոճրագործութիւնները:

Ուրեմն ո՞րու դիմենք կամ յո՞րմէ յուսանք օգնութիւն, քանի որ Եւրոպան խուլ և համր է: Այժմ մեզ համար միայն մէկ բան կայ միութեամբ կամ համերաշխեթեամբ գործել, մէկ կողմ նետելով անձնական կիրք, հակառակութիւն, կուսակցամոլութիւն ելլն, ձեռք ձեռքի տանք, յառաջ մղենք յեղափոխական սուրբ գործը, ի սէր այն երկու հարիւր հազար նահապետաց:

Հայրենակիցք, եթէ մենք ճշմարիտ և պարտաճանաչ հայեր ենք՝ չպէտք է այլևս անտարբեր մնալ և թշնամոյն հրովը, սրովը նու գնդակովը լախուհիք, աշխարհի վրայէն անհետանալու դիրքին մէջ ինկած ենք, բայց մենք այստեղ հրապարակային հօլերու մէջ միութիւն կը քարոզենք բեմերէն, ազդու և եռանդուն խօսքերով: Շօր Հնչակեանք իրենց թերթին մէջ «մէկ Հայրենիք, մէկ բանակ մէկ նպատակ» կը քարոզեն և խոստ անդ զրոյցներ միայն կը չորջրն միութեան անուանով, գործնաիրանի գաղութ կայ մէկը որ առաջին քայլը առնէ, եթէ Նոր-Հնչակեանք կ'ընեն որ Դաշնակցականք թող առնենք այդ քայլը, արդէն Դաշնակցականները շարունակ իրենց թերթովն միութիւն քարոզած են, ժողովրդին հետ ալ միացած են, Դաշնակցութիւն անդէն միութիւն ըսել է ու իր խաբխալը ատոր վրայ դրած է, եթէ Նոր-Հնչակեանք մեր ապակեդրոնացումը կ'ընդունին մենք արդէն միացած ենք, Դաշնակցութեան ծրարի նպատակն և կազմակերպութիւնը առ մեն հայ անհատի փափաքն է: Ինչու պէս ըսի եթէ Նոր-Հնչակեանք ինքուանին ապակեդրոնացումը և հեռանան իրենց կեդրոնացումէն, Դաշնակցութեան ամեն մէկ կօմիտէ պիտի ըլլայ ըսելով Սփրիկայի մէջ քանի մը յեղափոխականներ շարունակ իրենց դրած են միութեան վրայ վիճելով պոռոտաօսութիւններ

ընել, «լուկ հաւատքը մարդ չփրկէր» գործ պէտք է տեսնել:

Հակառակ պարագային եթէ չէ կարելի բոլորովին ձուլել տալ երկու կուսակցութիւնները, գէթ ամեն տեղեր համերաշխ գործել սկսէին: Մենք, Դաշնակցականներս կ'ընենք թէ՛ մեր ծրարի բոլոր յօդուածները քննելու և քննադատելու կէտեր չունի, իսկ եթէ հակառակ պարագային լինին կէտեր որ փոփոխութիւն մըտցուի, մենք ապակեդրոնացումը չենք զոհեր ամեն պարագայի տակ, միութեան կամ համերաշխութեան ջերմ սիրահար ենք, ամեն ժամանակ ալ միութեան համար առաջին քայլն Դաշնակցականները առած են իրենց ծագումէն մինչև ցարդ: Մենք մեր կազմակերպութիւնը փոփոխութեան չենք ենթարկեր, մենք շատ փառանք քաջեցիկք կեդրոնացումէն ու քաջելու ալ նշոյլներ կ'երեւին, ինչ որ ալ լինի ապակեդրոնացումն մեր կազմակերպութեան հիմնաքարն է:

ՓՐՈՎԻՏԵՆՍ, 7 ապրիլ
ՄԻՈՒԹԻՒՆԸ ՊԵՏԵՐ Է

Ժամանակէ մը ի վեր Հայկական յեղափոխական ուժերու միացման առթիւ զրոյցներ չըլեցաւ, որ հետզհետէ սուր կերպարանք մը ստացաւ, ինչպէս «Միութիւն»ի 7րդ թիւը երեք որոշ հարցեր առաջարկելով, կոչում կ'ընէր բոլոր հայերին յայտնել իրենց գաղափարը միութեան մասին:

Հայկական յեղափոխական ոյժերու միացման ջերմագէս փափաքող և Հայրենիքի ապստոլութեան ու նրա իսկական շահերը սիրող, կը փութամ իմ գաղափարս ալ յայտնել:

Ա. հարցի մասին իմ համոզումն է յեղափոխական մարմնաց անպայման միութիւնը, որով միայն կարելի կը լինի ձեռք բերել մեր պահանջը և աւելի զօրաւոր ու վերջնական փութածը տալ Պէտք Մարդնապան-Տիւաղ Սուրբանին:

Միութիւն թէ համերաշխ գործունէութիւն, որ երկրորդ հարցը կը կազմէ, այս մասին նախնադրելի է բացարձակ ձուլումը, եթէ ղեկավարող մարմիններու մէջ տ ի բ ա ց ու ա կ ա ն սկզբունքներ չկան, բայցերբ այդ անկարելի լինի օրինաւոր պատճառներով ապացուցուած և գաղափարի տարբերութեան պատճառաւ: Գնահատելով գործունէութիւնը անհրաժեշտ է, և որպէս զի այդ քայլը դիւրութեամբ առնուի և Դաշնակցութեան առաջնութեան տեղիք չմնայ, ամեն պարագայի տակ նորակազմ Հնչակեանները պէտք է յանձն առնեն իրենց վարչ. և յեղափոխական ա-

պարէզէն դուրս ձգեն այն անձնաւորութիւնները, որոնց մասին արդէն յայտարարած է Դաշնակցութիւնը իր կապածիլի անձնաւորութիւններ և որոնց մասին հրապարակի վրայ բաւական խօսուած է, թէպէտ և լինին անկեղծ, ազգասէր, և ազնիւ անձնաւորութիւններ, այդ ապագան թող պարզէ...

Գ. հարցը որ աւելի փխաւոր տեղ մը կը գրաւէ իբր միջոց, ի հարկէ այդ մասին երկար գրելու պէտք խիստ շատ է, բայց որովհետեւ երկար գրելու արտօնութիւն չէ տըրտած, պիտի գրեմ կարելի եղածին չափ համառօտ, այնինքն թէ՛

Յեղափոխական երկու մարմինները ի մի գալով մշակեն ծրագիրը և բարեփոխութիւններ մտցնելով կազմեն նոր մը, որ լինի աւելի հիմնական և կանոնաւոր, բայց միշտ պահելով ապակեդրոնացման սկզբունքը, խոյս տալով կեդրոնացումէն, որուն շնորհիւ Հնչակեանք չարաչար տուժեցին և ժողովրդին համակրութիւնը չեղարացուցին զէպի յեղափոխութիւնը:

Իսկ թերթը թող հրատարակուի նոր անունով մ: իր տակ կրելով այժմու «Հայ Յեղ. Դաշնակցութեան Օրգան» անունը:

Հակառակ պարագային երբ այս ընդհանուր միութիւնը անկարելի լինի, համերաշխ գործունէութիւնը անհրաժեշտ է, որուն համար պէտք է կնքել Դաշնակցութիւն մը որ պարտաւորիչ լինին բոլորովին համերաշխութեամբ վերաբերիլ զէպի զիրար, ի բաց ձգելով կուսակցական տոտիւթիւն և չար նախնած, որն իսկապէս կը փնտէս վեր դառնի և լրաբում առաջ կը բերէ ժողովրդին մէջ, որուն դառն վերջնաբեք տեսանք և կը տեսնենք դեռ:

Պէտք չէ որ և իցէ յեղափոխական գործ, շարժում հետեւելով մեծնաւորների քիթուն փշածին և կամայականութեան, առանց նախապէս քննելու տեղը, պարագան, օգտակարութիւնը և յարմարութիւնը, բառին պարզ բնութեամբ յեղափոխական գործերը կեդրոնական երկրի արտին մէջ և ոչ հիւրինների աշխարհէն հրահանգ ուղարկուի կըրուի դաշտին մէջ պատերազմողին և ահոր պահանջը կամ իրաւունքը ձգող ջմահած անձինքներէ, որոնք չարաչար գործածելով ազգին շահերը յեղափոխութիւնը չփրկեցնեն:

Կ. Յ.

«Միութիւն»ի նիթերը շատ ըլլալով, թերթին փոքր զկրքը չնկերուն համար յետաւայսու «Յաւելուած»ի մէջ յիստիւնէնք գաղափարի յօդուածներ:

ԽՄԲԱՔՐՈՒԹԻՒՆ «ՄԻՈՒԹԻՒՆ»ԻՆ